

ԲԱԺԻՆ 2 ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՆ ՈՒ ԿԱՆԱՆՑ ԾՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի հանձնարարականների համաձայն մարդահամարի ընթացքում բնակչության ամուսնական կարգավիճակի վերաբերյալ տվյալները հավաքագրվել են 15 և բարձր տարիքի բնակչության, իսկ կանանց ծնելիության վերաբերյալ՝ 15 և բարձր տարիքի իգական սեռի ներկայացուցիչների (անկախ ամուսնական կարգավիճակից) վերաբերյալ:

Մեթոդաբանական պարզաբանումներ

Սույն հրապարակման մեջ ներկայացված են նաև տվյալներ՝ գրանցված, փաստացի և **միայն եկեղեցու կանոնական ծեսով իրագործած** ամուսնական կարգավիճակում գտնվողների, ինչպես նաև գրանցված և փաստացի **ամուսնալուծվածների** վերաբերյալ:

Փաստացի ամուսնացած (առանց գրանցման) համարվել են այն անձինք, ովքեր գտնվել են փաստացի ամուսնական կապի մեջ, սակայն նրանց ամուսնությունը գրանցված չէ Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության մարմինների կողմից:

Միայն եկեղեցու կանոնական ծեսով ամուսնացած համարվել են այն անձինք, որոնց ամուսնությունը գրանցվել է միայն Հայաստանյաց առաքելական սուրբ եկեղեցու կողմից իրագործված ծեսով: Ընդ որում, եթե ամուսնությունը գրանցվել է ոչ միայն եկեղեցու, այլ նաև Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության մարմինների կողմից, ապա այդ անձինք համարվել են գրանցված ամուսնացածներ:

Փաստացի բաժանված (առանց գրանցման) համարվել են այն անձինք, ովքեր որպես ամուսիններ փատացի ապրում են իրարից առանձին, բայց նրանց բաժանությունը գրանցված չէ Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության մարմինների կողմից:

15 և բարձր տարիքի իգական սեռի ներկայացուցիչների կողմից **ծնած երեխաների ընդհանուր թվաքանակի ցուցանիշում** ներառված են կենդանածին երեխաները, անկախ այն հանգամանքից, թե բոլոր երեխաները հաշվառման պահին ողջ են եղել, թե ոչ, և գտնվել են արդյոք տվյալ տնային տնտեսության կազմում, թե ապրել են առանձին (չհաշվելով մեռելածինները): Ընդ որում, որդեգրած և խնամակալված երեխաները, ինչպես նաև ամուսնու նախկին ամուսնությունից ունեցած երեխաները տվյալ կնոջ ծննդաբերած երեխաների թվաքանակում չեն ներառված:

Կանանց կողմից երբևէ ծնած երեխաների միջին թվաքանակի ցուցանիշը հաշվարկվել է համապատասխան տարիքային խմբի կանանց կողմից ծնած երեխաների ընդհանուր թվաքանակի և նույն տարիքային խմբի կանանց թվաքանակի հարաբերությունով՝ բազմապատկած 1000-ով:

Ողջ մնացած երեխաների միջին թվաքանակի ցուցանիշը հաշվարկվել է կանանց տվյալ տարիքային խմբի ողջ մնացած երեխաների ընդհանուր թվաքանակի և նույն տարիքային խմբի կանանց ընդհանուր թվաքանակի հարաբերությունով՝ բազմապատկած 1000-ով:

